ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների և լրացման մասին

Դատական դեպարտամենտը ստորև ներկայացնում է իր կարիքների համար ներկառուցված կահույքի պատրաստման և տեղադրման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԳՀԱՇՁԲ-23/02» ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 2023 թվականի հունիսի 21-ին կնքված N «ԴԴ-ԳՀԱՇՁԲ-23/02» պայմանագրում (այսուհետ՝ Պայմանագիր) 2023 թվականի դեկտեմբերի 21-ին կատարված փոփոխությունների և լրացման վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունները և լրացումը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

Փոփոխությունների և լրացման առաջացման պատճառ՝

Անհրաժեշտություն է առաջացել, պահպանելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 56-րդ կետով նախատեսված պայմանները, Պայմանագրի 1-ին չափաբաժնի մասով մնացած 713 քմ ներկառուցված կահույքի պատրաստման և տեղադրման աշխատանքներից 375 քմ աշխատանքները, 2-րդ չափաբաժնի մասով մնացած 323 քմ ներկառուցված կահույքի պատրաստման և տեղադրման աշխատանքներից 300 քմ աշխատանքները փոխարինել նոր՝ կահույքի պատրաստման և տեղադրման աշխատանքներով, որի նպատակով նախատեսվել են 11 186 000 (տասնմեկ միլիոն մեկ հարյուր ութսունվեց հազար) ՀՀ դրամի չափով ֆինանսական միջոցներ:

Փոփոխությունների և լրացման նկարագրություն՝

1. Պայմանագրի 4.1. կետում 74 578 500 (յոթանասունչորս միլիոն հինգ հարյուր յոթանասունութ հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ բառերը փոխարինվել են 74 577 725 (յոթանասունչորս միլիոն հինգ հարյուր յոթանասունյոթ հազար յոթ հարյուր քսանհինգ) ՀՀ դրամ բառերով,
2. Պայմանագրի «ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ» վերտառությամբ Հավելված N 1-ը փոփոխվել է,
3. Պայմանագրի շրջանակում 24.11.2023թ. կնքված N 2 համաձայնագրի N 1 հավելվածով հաստատված «ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ»-ում կատարվել է լրացում:

Փոփոխությունների և լրացման հիմնավորում՝

Պայմանագրի 7.5 կետ:

Պատվիրատու՝ **Դատական դեպարտամենտ**

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 4

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՆԵՐԿԱՌՈՒՑՎԱԾ ԿԱՀՈՒՅՔԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԵՎ ՏԵՂԱԴՐՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ 21.06.2023թ. N «ԴԴ-ԳՀԱՇՁԲ-23/02» ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ 24.11.2023Թ. ԿՆՔՎԱԾ N 2 ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան «21» դեկտեմբերի 2023թ.

Դատական դեպարտամենտը, ի դեմս ղեկավարի պարտականությունները կատարող Ն. Գալստյանի, որը գործում է Դատական դեպարտամենտի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «ԷՔՍԻՏՈ» ՍՊԸ-ն, ի դեմս լիազորված անձ Մ. Կարապետյանի, որը գործում է ընկերության տնօրեն Կ. Աղյանի կողմից 27 նոյեմբերի 2023թ. տրված լիազորագրի հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, երկուսը միասին (այսուհետ՝ Կողմեր), ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ, պահպանելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 56-րդ կետով նախատեսված պայմանները և հիմք ընդունելով 21.06.2023թ. կնքված N «ԴԴ-ԳՀԱՇՁԲ-23/02» գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 7.5 կետը՝ փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր)՝ հետևյալի մասին.

1. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

Հաշվի առնելով Պայմանագրի 1-ին չափաբաժնի մասով մնացած 713 քմ ներկառուցված կահույքի պատրաստման և տեղադրման աշխատանքներից 375 քմ աշխատանքները, 2-րդ չափաբաժնի մասով մնացած 323 քմ ներկառուցված կահույքի պատրաստման և տեղադրման աշխատանքներից 300 քմ աշխատանքները նոր՝ կահույքի պատրաստման և տեղադրման աշխատանքներով փոխարինման անհրաժեշտությունը ու այդ նպատակով 11 186 000 (տասնմեկ միլիոն մեկ հարյուր ութսունվեց հազար) ՀՀ դրամի չափով նախատեսված ֆինանսական միջոցները, ինչպես նաև վերոնշյալ փոփոխությամբ պայմանավորված Պայմանագրի ընդհանուր գնի վերանայման անհրաժեշտությունը՝ Կողմերը որոշեցին.

1.1. Պայմանագրի 4.1. կետում 74 578 500 (յոթանասունչորս միլիոն հինգ հարյուր յոթանասունութ հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ բառերը փոխարինել 74 577 725 (յոթանասունչորս միլիոն հինգ հարյուր յոթանասունյոթ հազար յոթ հարյուր քսանհինգ) ՀՀ դրամ բառերով,

1.2. Պայմանագրի «ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ» վերտառությամբ Հավելված N 1-ը փոփոխել՝ համաձայն Համաձայնագրի հավելված N 1-ի,

1.3. Պայմանագրի շրջանակում 24.11.2023թ. կնքված N 2 համաձայնագրի N 1 հավելվածով հաստատված «ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ»-ում կատարել լրացում՝ համաձայն Համաձայնագրի հավելված N 2-ի:

2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1. Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2. Համաձայնագրի (Պայմանագրի) պայմանները կիրառվում են 01.11.2023թ.-ից կողմերի միջև փաստացի ծագած հարաբերությունների նկատմամբ: Ընդ որում, Պայմանագիրը կնքելուց հետո մինչև դրա հիման վրա Համաձայնագիրը կնքելը Կատարողի կողմից կատարված աշխատանքների դիմաց վճարումն իրականացվում է Համաձայնագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու դեպքում:

2.3. Համաձայնագրում չնշված՝ Կողմերի՝ Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.4. Համաձայնագիրը կազմված է 13 էջից, կնքվում է հայերեն լեզվով, երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, և յուրաքանչյուր Կողմին տրվում է մեկական օրինակ: Համաձայնագրի N 1, N 2 հավելվածները հանդիսանում են Համաձայնագրի անբաժանելի մասը:

3. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ ԵՎ ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
Դատական դեպարտամենտ	***«ԷՔՍԻՏՈ» ՍՊԸ***
Հասցե՝ ք. Երևան, Կորյունի 15/1	Հասցե՝ ք. Երևան, Աջափնյակ, 16 թղմ., 18, բն. 41
ՀՎՀՀ՝ 02583241	ՀՎՀՀ՝ 01260623
Հ/Հ՝ 900011025757, 900011005841	Հ/Հ՝ 16048260010500
ՀՀ ՖՆ գանձապետական վարչություն	«ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ
Ղեկավարի պարտականությունները կատարող Ն. Գալստյան	Լիազորված անձ՝ Մ. Կարապետյան
/ստորագրություն/	/ստորագրություն/

Հավելված N 1
« 21 » դեկտեմբերի 2023թ. կնքված N 4 համաձայնագրի

(Հավելված N 1
« 21 » հունիսի 2023թ. կնքված
«ԴԴ-ԳՀԱՇՁԲ-23/02» ծածկագրով պայմանագրի)

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Աշխատանքի								
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	առավելագույն գինը (ՀՀ դրամ)	առավելագույն քանակը	կատարման	
							հասցեն	ժամկետը
1	45421119/501	Ներկառուցված կահույքի պատրաստման և տեղադրման աշխատանքներ	Դարակաշարեր՝ նախատեսված փաստաթղթերի տեղադրման համար: Դարակաշարերը պետք է պատրաստված լինեն երկաթյա մետաղական կոնստրուկցիաներով, դարակը համապատասխան խտացրած 18մմ հաստությամբ լամինացված փայտանյութից /ԴՍՊ/, ունենան ապամոնտաժելու և հավաքելու հնարավորություն: Մետաղյա կոնստրուկցիան - դարակաշարի բարձրությունը՝ 270-300սմ: Ուղղահայաց մետաղական դետալների /պողպատյա	քմ	29 675 625	2125	Դատական դեպարտամենտի Երևան քաղաքում տեղակայված առանձնացված ստորաբաժանումներ (դատարանների վարչական շենքեր)	Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 01-ը: Ընդ որում, յուրաքանչյուր պատվերի համար կատարման ժամկետ է սահմանվում պատվերի ձևավորմանը հաջորդող օրվանից հաշված 30 օրացուցային օր, իսկ այդ պատվերի ամբողջական

			քառանկյուն խողովակ/ պատերի հաստությունը՝ ոչ պակաս 3մմ: Հորիզոնական մետաղական դետալների /անկյունակ/ պատերի հաստությունը՝ ոչ պակաս 2,5մմ, իսկ լայնությունը՝ 2-3սմ: Դարակաշարի ուղղահայաց դետալները պետք է ունենան նվազագույնը 50*50մմ չափսերով ոչ պակաս 3մմ հաստությամբ տակդիրներ (закладной): Դարակների բարձրությունը՝ 40-45սմ: Առաջին դարակը սկսվում է հատակից 15սմ բարձրությունից: Դարակների լայնությունը /խորությունը/՝ 32-35սմ, երկարությունը՝ ըստ Պատվիրատուի պահանջի, սակայն առնվազն 150սմ երկարությամբ թռիչքը մեկ ուղղահայաց ոտք ամբողջ բարձրությամբ: Դարակաշարի արտաքին տեսքը նախապես համաձայնեցվում է Պատվիրատուի հետ:					կատարումը ներառում է դարակաշարերի պատրաստման, տեղափոխման և տեղադրման աշխատանքները:
2	45421119/502	Ներկառուցված կահույքի պատրաստման և տեղադրման աշխատանքներ	Դարակաշարեր՝ նախատեսված փաստաթղթերի տեղադրման համար: Դարակաշարերը պետք է պատրաստված լինեն երկաթյա մետաղական կոնստրուկցիաներով, դարակը համապատասխան խտացրած	քմ	33 716 100	1700	Դատական դեպարտամենտի Երևան քաղաքում տեղակայված առանձնացված ստորաբաժանումներ	Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև տվյալ

			18մմ հաստությամբ լամինացված փայտանյութից /ԴՍՊ/, ունենան ապամոնտաժելու և հավաքելու հնարավորություն: Մետաղյա կոնստրուկցիան - դարակաշարի բարձրությունը՝ 270-300սմ: Ուղղահայաց մետաղական դետալների /պողպատյա քառանկյուն խողովակ/ պատերի հաստությունը՝ ոչ պակաս 3մմ: Հորիզոնական մետաղական դետալների /անկյունակ/ պատերի հաստությունը՝ ոչ պակաս 2,5մմ, իսկ լայնությունը՝ 2-3սմ: Դարակաշարի ուղղահայաց դետալները պետք է ունենան նվազագույնը 50*50մմ չափսերով ոչ պակաս 3մմ հաստությամբ տակդիրներ (закладной): Դարակների բարձրությունը՝ 40-45սմ: Առաջին դարակը սկսվում է հատակից 15սմ բարձրությունից: Դարակների լայնությունը /խորությունը/՝ 64-70սմ, երկարությունը՝ ըստ Պատվիրատուի պահանջի, սակայն առնվազն 150սմ երկարությամբ թռիչքը մեկ ուղղահայաց ոտք ամբողջ բարձրությամբ: Դարակաշարի արտաքին տեսքը նախապես				(դատարանների վարչական շենքեր)	տարվա դեկտեմբերի 01-ը: Ընդ որում, յուրաքանչյուր պատվերի համար կատարման ժամկետ է սահմանվում պատվերի ձևավորմանը հաջորդող օրվանից հաշված 30 օրացուցային օր, իսկ այդ պատվերի ամբողջական կատարումը ներառում է դարակաշարերի պատրաստման, տեղափոխման և տեղադրման աշխատանքները:

			համաձայնեցվում է Պատվիրատուի հետ:					

Դարակաշարերը տեղադրվելու են Դատական դեպարտամենտի Երևան քաղաքում տեղակայված առանձնացված ստորաբաժանումներում (դատարանների վարչական շենքերում): Դարակաշարերի չափագրումը, տեղափոխումը և տեղադրումը (ներառյալ տեղադրման համար անհրաժեշտ բոլոր դետալները և նյութերը) պետք է իրականացվեն Կատարողի կողմից:

Աշխատանքները պետք է կատարվեն Պատվիրատուի կողմից տրամադրվող պատվերի հայտերի հիման վրա: Պատվիրատուից էլեկտրոնային փոստի միջոցով կամ բանավոր պատվերի հայտը ստանալու օրվանից հետո հինգ օրացուցային օրվա ընթացքում Կատարողը պետք է այցելի Պատվիրատուի կողմից նշված հասցեներ, կատարի համապատասխան չափագրումներ և արդյունքները ներկայացնի Պատվիրատուի հաստատմանը: Պատվերը ձևավորված է համարվում Պատվիրատուի կողմից հաստատված չափագրման արդյունքների մասին Կատարողին էլեկտրոնային փոստի միջոցով տեղեկացնելու օրը:

Կատարողը կարող է աշխատանքները կատարել պայմանագրով սահմանված ժամկետներից ավելի կարճ ժամկետներում:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը, ներառյալ պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման նպատակով ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքված համաձայնագիրը (համաձայնագրերը), << ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

Աշխատանքի								
							Կատարման	
հ/հ	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	գինը (<< դրամ)	քանակը	հասցեն	ժամկետը
1	45421119/5	Կահույքի պատրաստման և տեղադրման աշխատանքներ	**Կահույքի պատրաստման և տեղադրման աշխատանքներ, որոնք ներառում են.** Անջրպետ՝ թվով 6 հատ, գինը՝ 594000 << դրամ: Չափսերը՝ 120x100սմ: Անջրպետները պատրաստվում են փայտից, պետք է ունենան հատուկ հարմարանքներ հատակին ամրացնելու	դրամ	11 186 000	1	ք. Երևան, Կորյունի 15/1, Կորյունի 17, Թբիլիսյան խճ. 3/9	01.11.2023թ.-ից կողմերի միջև փաստացի ծագած հարաբերություններ

			համար: Ամբողջ հարթությունը պետք է լինի ողորկ, լավ մշակված և լաքապատված 3 շերտով: Անջրպետը պետք է ունենա 2 ոտքեր՝ 100սմ բարձրությամբ և 7x7սմ հաստությամբ փայտից, մեջտեղում ոտքերը իրար միացնող 6.5x4.5սմ հաստությամբ 2 փայտյա գոտիներով 106սմ երկարությունով, առաջինի բարձրությունը հատակից 17սմ, երկրորդը՝ վերևից 8սմ ներքև: Երկու գոտիների մեջտեղում ամբողջական ԴՍՊ 18մմ հաստությունով: Արտաքին տեսքը և գույնը համաձայնեցվում է Պատվիրատուի հետ: Գրապահարան՝ թվով 5 հատ, գինը՝ 165000 << դրամ: Գրապահարանը պատրաստվում է 18մմ հաստությամբ լամինացված ՄԴՖ-ից: Չափսերը՝ 190x40x76սմ: Գրապահարանը ունի 2 դուռ, ներսում բաժանված է 4 դարակաշարերով: Դռներին տեղադրվում են փականներ և մետաղական բռնակներ: Գույնը և արտաքին տեսքը համաձայնեցվում է Պատվիրտուի հետ: Գրապահարան՝ թվով 7 հատ, գինը՝ 245000 << դրամ: Գրապահարանը պատրաստվում է 18մմ հաստությամբ լամինացված ՄԴՖ-ից: Չափսերը՝ 190x40x85.7սմ: Գրապահարանը ունի 2 դուռ, ներսում բաժանված է 4 դարակաշարերով: Դռներին տեղադրվում են փականներ և մետաղական բռնակներ: Գույնը և արտաքին տեսքը համաձայնեցվում է Պատվիրտուի հետ: Գրապահարան՝ թվով 4 հատ, գինը՝ 152000 << դրամ: Գրապահարանը պատրաստվում է 18մմ հաստությամբ լամինացված ՄԴՖ-ից: Չափսերը՝ 190x40x82.5սմ: Գրապահարանը ունի 2 դուռ, ներսում բաժանված է 4 դարակաշարերով: Դռներին տեղադրվում են փականներ և մետաղական					

			բռնակներ: Գույնը և արտաքին տեսքը համաձայնեցվում է Պատվիրատուի հետ: Գրապահարան՝ թվով 1 հատ, գինը՝ 27000 ՀՀ դրամ: Գրապահարանը պատրաստվում է 18մմ հաստությամբ լամինացված ՄԴՖ-ից: Չափսերը՝ 190x40x45սմ: Գրապահարանը ունի 2 դուռ, ներսում բաժանված է 4 դարակաշարերով: Դռներին տեղադրվում են փականներ և մետաղական բռնակներ: Գույնը և արտաքին տեսքը համաձայնեցվում է Պատվիրատուի հետ: Գրապահարան՝ թվով 1 հատ, գինը՝ 41000 ՀՀ դրամ: Գրապահարանը պատրաստվում է 18մմ հաստությամբ լամինացված ՄԴՖ-ից: Չափսերը՝ 190x40x90սմ: Գրապահարանը ունի 2 դուռ, ներսում բաժանված է 4 դարակաշարերով: Դռներին տեղադրվում են փականներ և մետաղական բռնակներ: Գույնը և արտաքին տեսքը համաձայնեցվում է Պատվիրատուի հետ: Գրապահարան՝ թվով 4 հատ, գինը՝ 136000 ՀՀ դրամ: Գրապահարանը պատրաստվում է 18մմ հաստությամբ լամինացված ՄԴՖ-ից: Չափսերը՝ 190x40x70սմ: Գրապահարանը ունի 2 դուռ, ներսում բաժանված է 4 դարակաշարերով: Դռներին տեղադրվում են փականներ և մետաղական բռնակներ: Գույնը և արտաքին տեսքը համաձայնեցվում է Պատվիրատուի հետ: Գրապահարան՝ թվով 2 հատ, գինը՝ 74000 ՀՀ դրամ: Գրապահարանը պատրաստվում է 18մմ հաստությամբ լամինացված ՄԴՖ-ից: Չափսերը՝ 183x40x85սմ: Գրապահարանը ունի 2 դուռ, ներսում բաժանված է 4 դարակաշարերով: Դռներին տեղադրվում են մետաղական բռնակներ: Գույնը և արտաքին տեսքը համաձայնեցվում է Պատվիրատուի					

			հետ: Գրապահարան՝ թվով 8 հատ, գինը՝ 312000 ՀՀ դրամ: Գրապահարանը պատրաստվում է 18մմ հաստությամբ լամինացված ՄԴՖ-ից: Չափսերը՝ 183x40x87.5սմ: Գրապահարանը ունի 2 դուռ, ներսում բաժանված է 4 դարակաշարերով: Դռներին տեղադրվում են փականներ և մետաղական բռնակներ: Գույնը և արտաքին տեսքը համաձայնեցվում է Պատվիրտուի հետ: Գրապահարան՝ թվով 6 հատ, գինը՝ 204000 ՀՀ դրամ: Գրապահարանը պատրաստվում է 18մմ հաստությամբ լամինացված ՄԴՖ-ից: Չափսերը՝ 178x40x71.6սմ: Գրապահարանը ունի 2 դուռ, ներսում բաժանված է 4 դարակաշարերով: Դռներին տեղադրվում են մետաղական բռնակներ: Գույնը և արտաքին տեսքը համաձայնեցվում է Պատվիրտուի հետ: Գրապահարան՝ թվով 4 հատ, գինը՝ 140000 ՀՀ դրամ: Գրապահարանը պատրաստվում է 18մմ հաստությամբ լամինացված ՄԴՖ-ից: Չափսերը՝ 178x40x77սմ: Գրապահարանը ունի 2 դուռ, ներսում բաժանված է 4 դարակաշարերով: Դռներին տեղադրվում են մետաղական բռնակներ: Գույնը և արտաքին տեսքը համաձայնեցվում է Պատվիրտուի հետ: Գրապահարան՝ թվով 15 հատ, գինը՝ 510000 ՀՀ դրամ: Գրապահարանը պատրաստվում է 18մմ հաստությամբ լամինացված ՄԴՖ-ից: Չափսերը՝ 178x40x80սմ: Գրապահարանը ունի 2 դուռ, ներսում բաժանված է 4 դարակաշարերով: Դռներին տեղադրվում են մետաղական բռնակներ: Գույնը և արտաքին տեսքը համաձայնեցվում է Պատվիրտուի հետ:					

			Գրապահարան՝ թվով 5 հատ, գինը՝ 190000 ՀՀ դրամ: Գրապահարանը պատրաստվում է 18մմ հաստությամբ լամինացված ՄԴՖ-ից: Չափսերը՝ 178x40x82սմ: Գրապահարանը ունի 2 դուռ, ներսում բաժանված է 4 դարակաշարերով: Դռներին տեղադրվում են մետաղական բռնակներ: Գույնը և արտաքին տեսքը համաձայնեցվում է Պատվիրատուի հետ: Գրապահարան՝ թվով 3 հատ, գինը՝ 99000 ՀՀ դրամ: Գրապահարանը պատրաստվում է 18մմ հաստությամբ լամինացված ՄԴՖ-ից: Չափսերը՝ 175x40x77սմ: Գրապահարանը ունի 2 դուռ, ներսում բաժանված է 4 դարակաշարերով: Դռներին տեղադրվում են մետաղական բռնակներ: Գույնը և արտաքին տեսքը համաձայնեցվում է Պատվիրատուի հետ: Դեկորատիվ և շղարշային վարագույրներ՝ նախատեսված երկու հատ 280X280սմ չափսերով մակերես ծածկելու համար, գինը՝ 370000 ՀՀ դրամ: Շրիշակ՝ 556սմ, գինը՝ 111200 ՀՀ դրամ: Պատրաստվում է եռաշերտ լաքապատ, ողորկ, դեկորատիվ կլորություններով շպոնապատ ՄԴՖ-ից: Քիվ՝ թվով 2 հատ 280սմ, գինը՝ 249000 ՀՀ դրամ: Պատրաստվում է եռաշերտ լաքապատ, ողորկ, դեկորատիվ կլորություններով շպոնապատ ՄԴՖ-ից, վարագույր կախելու համար նախատեսված պրոֆիլներով և պլաստմասե կախիչներով: Գրապահարան՝ թվով 1 հատ, գինը՝ 2384800 ՀՀ դրամ: Գրապահարանը պատրաստվում է 18մմ հատությամբ շպոնապատ ՄԴՖ-ից: Չափսերը՝ 296x446x44սմ: Գրապահարանը ներքևի հատվածում					

			պետք է ունենա 45սմ բարձրությամբ 8 դուռ՝ մեջտեղում հատված բուխարու համար՝ 48սմ լայնությամբ: Դռների վերևում առանձնացված 5 դարակաշար՝ 34.5սմ բարձրությամբ: Գրապահարանի արտաքին մասը պատվում է դեկորատիվ էլեմենտներով և նախշերով: Գրապահարանը ամբողջությամբ պետք է լինի հղկված և լաքապատ բարձր որակի ներկանյութերով: Թվով 1 հատ սեղանի վերանորոգում, գինը՝ 520000 << դրամ: 2մ տրամագծով սեղանի և հենակի մակերևույթի հղկում, լաքապատ շերտի հեռացում, վնասված մասերում շպոնի վերականգնում, ամբողջությամբ ներկում և լաքապատում բարձրորակ ներկանյութերով: Բառի սեղան՝ թվով 1 հատ, գինը՝ 850000 << դրամ: Պատրաստվում է 18մմ հաստությամբ շպոնապատ ՄԴՖ-ից: Չափսերը՝ 177x60x102սմ: Սեղանը ունի 4 առանձնացված դարակներ դռներով, ներսում 1 դարակաշար: Սեղանի դռները և եզրերը ամբողջությամբ պատվում են փայտյա դեկորատիվ էլեմենտներով: Սեղանը ամբողջությամբ պետք է լաքապատվի և ներկվի հատուկ ներկանյութերով: Բուխարի դեկորատիվ շրջանակով՝ թվով 1 հատ, գինը՝ 120000 << դրամ: Էլեկտրական բուխարի. ○ Բոցի պայծառության կառավարում, ○ Հեռակառավարման վահանակ, ○ Սպասարկման տարածք՝ 25 քմ, Չափսերը (LxBxH) մմ՝ 482x592x180: Ջահ՝ թվով 1 հատ, գինը՝ 144000 << դրամ: Ջահ՝ մետաղական, մոմերի քանակը՝ 12, լամպերի տեսակը՝ E14:					

			Աթոռ՝ թվով 10 հատ, գինը՝ 490000 << դրամ: Աթոռն ամբողջությամբ պատրաստվում է փայտից, լաքապատ, թիկնակը և նստատեղը երեսպատված բարձր խտությամբ սպունգով և բարձրորակ կտորով: Չափսերը՝ գետնից մինչև նստատեղ՝ 45սմ, գետնից մինչև թիկնակի վերին մասը՝ 103սմ, նստատեղի լայնքը՝ 54սմ: Չափսերի թույլատրելի շեղումը՝ +,- 2%: Պատերի երեսպատում՝ 10.2 մետր, գինը՝ 2800000 << դրամ: Պատերի երեսպատում 105սմ բարձրությամբ շպոնապատ ՄԴՖ-ից փայտի դեկորներից: Փոքր սեղան՝ թվով 1 հատ, գինը՝ 120000 << դրամ: Շրջանաձև սեղան՝ ամբողջությամբ պատրաստվում է փայտից: Չափսերը՝ 59սմ տրամագծով, 60սմ բարձրությամբ: Աթոռ՝ թվով 2 հատ, գինը՝ 138000 << դրամ: Աթոռն ամբողջությամբ պատրաստվում է փայտից, լաքապատ, փայտյա կողային հենակներով, թիկնակը և նստատեղը երեսպատված բարձր խտությամբ սպունգով և բարձրորակ կտորով: Չափսերը՝ գետնից մինչև նստատեղ՝ 45սմ, գետնից մինչև թիկնակի վերին մասը՝ 103սմ, նստատեղի լայնքը՝ 54սմ: Չափսերի թույլատրելի շեղումը՝ +,- 2%:					

Կահույքի տեղափոխումը և տեղադրումը (ներառյալ տեղադրման համար անհրաժեշտ բոլոր դետալները և նյութերը) իրականացվում են Կատարողի կողմից:

Աշխատանքները կատարվում են Պատվիրատուի կողմից նշված (բանավոր ձևով) կոնկրետ հասցեում (հասցեներում):

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
Դատական դեպարտամենտ	***«ԷՔՍԻՏՈ» ՍՊԸ***
Հասցե՝ ք. Երևան, Կորյունի 15/1	Հասցե՝ ք. Երևան, Աջափնյակ, 16 թղմ., 18, բն. 41
ՀՎՀՀ՝ 02583241	ՀՎՀՀ՝ 01260623
Հ/Հ՝ 900011025757, 900011005841	Հ/Հ՝ 16048260010500
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	«ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ
Ղեկավարի պարտականությունները կատարող՝ Ն. Գալստյան	Լիազորված անձ՝ Մ. Կարապետյան
/ստորագրություն/	/ստորագրություն/

Հավելված N 2
« 21 » « 12 » 2023թ. կնքված N 4 համաձայնագրի

(Հավելված N 1
« 24 » « 11 » 2023թ. կնքված N 2 համաձայնագրի)

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Աշխատանքի						
հ/հ	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2023թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում			
			հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
900011025757						
1	45421119/501	Ներկառուցված կահույքի պատրաստման և տեղադրման աշխատանքներ	13 965 000	24 955 455	24 955 455	**24 955 455**
2	45421119/502	Ներկառուցված կահույքի պատրաստման և տեղադրման աշխատանքներ	15 866 400	33 259 941	33 259 941	**33 259 941**
900011005841						
3	45421119/5	Կահույքի պատրաստման և տեղադրման աշխատանքներ			11 186 000	**11 186 000**

**Վճարման ենթակա գումարները ներկայացված են ամբողջական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Դպրական դեպարտամենտ
Հասցե՝ ք. Երևան, Կորյունի 15/1
ՀՎՀՀ՝ 02583241
Հ/Հ՝ 900011025757, 900011005841
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն

Ղեկավարի պարտականությունները
կատարող՝ Ն. Գալստյան

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ
«ԷՔՍԻՏՈ» ՍՊԸ
Հասցե՝ ք. Երևան, Աջափնյակ, 16 թղմ., 18, բն. 41
ՀՎՀՀ՝ 01260623
Հ/Հ՝ 16048260010500
«ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ

Լիազորված անձ՝ Մ. Կնյուրանետյան

/ստորագրություն/
Կ.Տ